ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԻՆ, ՇԱԲԱԹ ՕՐԸ, «Տօն շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ, որին ներկա էր հավատացյալների և ուխտավորների մեծ բազմություն։ Օրվա պատարագիչ և քարոզիչ հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլշուջյանը իր ամփոփ քարոզի մեջ խոսեց օրվա տոնի ազգային-եկեղեցական նշանակության մասին։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ԹԲԻԼԻՍԻԻՑ Մայր Աթոռ ժամանեց Թբիլիսիի և Վրաստանի թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Վահան աբեղա Գալամդարյանը, թեմական-եկեղեցական գործերի առնչությամբ։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր տաճարում մատուցվեց սուրբ պատարագ, հավատացյալների բազմության ներկայության։ Մայրաքաղաքից և Հայրենի երկրի բոլոր շրջաններից եկել էին բազմաթիվ ուխտավորներ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Սարգսյանը, որը գեղեցկորեն քարոզեց «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 26, ԿԻՐԱԿԻ, «Տօն դիւտի գոտւոյ Ս. Աստուածածնի»։ Օրվա տոնի կապակցությամբ մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների հոծ բազմության ներկայության։ Պատարագիչն էր գեղաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Իր բավանդակալից քարոզի մեջ սրբազան հայրը վերլուծելով տոնի նշանակությունը, ընդգծեց Ս. Աստվածածնի հանդեպ քրիստոնյա հավատացյալի հարգանքի ջերմությունն ու մայրության գաղափարի սրբությունը և հոգեպես մխիթարեց հավատացյալներին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղա Պետիկյանը։ Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԸ, իր քահանայական անդրանիկ սուրբ պատարագը մատուցեց նորընծա Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ հանգուցյալների համար։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՇԱԲԱԹ ՕՐԸ, Ս. Գևորգի տոնին Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։ Պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի շիրիմի վրա։

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Վեհափառ Հայրապետի հրամանով, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվեց քահանայական երեք ձեռնադրություն։ Ընծայյալները զգալով իրենց մեջ Հայաստանյայց Եկեղեցուն և հավատացյալներին ծառայելու կոչում, խոնարհաբար Վեհափառ Հայրապետին ներկայացրել էին քահանա ձեռնադրվելու իրենց խնդիրքը։ Վեհափառ Հայրապետը անձամբ ծանոթանալով քահանայացուների անձնավորության, արժանավորության և հոգևոր պատրաստության, հայտնեց իր բարեհաճ կարգադրությունը։ Ձեռնադրությունը կատարեց գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ժողովրդի խուռն բազմության ներկայության, տպավորիչ հանդիսությամբ։ Նորընծաներից երկուսը՝ բարեշնորհ Նշան սարկավագ Բեյլերյանը և բարեշնորհ Հովհաննես սարկավագ Մարուքյանը Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի նախկին սաներից են, կրթված, հավատավոր ու նվիրված։ Երրորդը՝ բարեշնորհ Կարապետ սարկավագը ավարտել է Անթիլիասի դպրեվանքում։ Նորընծաները ձեռնադրության ժամանակ պահպանեցին իրենց աշխարհական անունները՝ Տ. Հովհաննես, Տ. Նշան և Տ. Կարապետ։

Նորընծաները իրենց քառասունքը անցկացրին Մայր Աթոռում և ապա նշանակվեցին համապատասխան աշխատանքների։

Թող աստված միշտ վառ պահի նորընծաների հավատքն ու նվիրվածությունը և ուժ ու կարողություն տա լավագույնս կատարելու իրենց պարտքն ու պարտականությունները Եկեղեցու և ժողովրդի հանդեպ։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու մեջ տեղի ունեցավ քահանայական մի ձեռնադրություն ևս։ Նորընծան՝ բարեշնորհ Ռուբեն սարկավագ Մարտիրոսյանը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անդրանիկ շրջանավարտներից է։ Ձեռնադրությունը կատարեց գերապատիվ Տ. Սահակ սրբազանը հավատացյալ ժողովրդի մեծ բազմության ներկայության։ Նորընծան պահեց իր ավազանի անունը և կոչվեց Տ. Ռուբեն քահանա։ Նորընծան իր քառասունքը անցկացրեց Մայր Աթոռում։

Մաղթենք Տ. Ռուբեն քահանային ես կարողություն, որպեսզի արժևորի իր նվիրական կոչումը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ֆրանսիական ճարտարապետների պատվիրակությունը օգոստոսի 18-ին այցելեց Մայր Աթոռ։ Հյուրերը ծանոթացան Մայր Տաճարին, նրա դարավոր ճարտարապետության և մանրանկարչության։ Մեծ գոհունակությամբ և խոր տպավորություններով նրանք վերադարձան Մայրաքաղաք։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱՅՑԵԼԵՑ Նորվեգիայի խորհրդարանի (պառլամենտի) պատվիրակությունը։ Հյուրերին ընդունեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հանգամանորեն նրանց ծանոթացրեց Մայր Տաճարին և կից եկեղեցա-հնագիտական թանգարանին։

Հյուրերը հայտնեցին իրենց շնորհակալությունները և գոհունակությամբ մեկնեցին Երևան։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Հնդկաստանի մշակույթի և արվեստի գործիչների պատվիրակությունը, Հնդկաստանի արտաքին գործերի մինիստրի տեղակալ պ. Անիլ Կումար Չանդայի գլխավորությամբ։ Հյուրերին ընդունեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը հոգեշնորհ Տ. Եղիշե արեղայի հետ։ Սրբազան հայրը հյուրերին ծանոթացրեց Մայր Տաճարի պատմության և մանրանկարչական արվեստին։ Ապա հյուրերը առաջնորդվեցին Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանը, որտեղ ծանոթացան Մայր Աթոռի թանգարանի հին և թանկարժեք ցուցանմուշներին։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Կալիֆորնիայի հայ ուխտավորների առաջին խումբը, բաղկացած 19 հոգուց։ Բարեպաշտ ուխտավորներին Երևանի կայարանում դիմավորեցին բազմաթիվ հարազատներ և բարեկամներ։ Կայարանը լեցուն էր ժողովրդի խուռն բազմությամբ նաև այն պատճառով, որ միևնույն գնացքով Հայրենիք էին ժամանում Ֆրանսիայից և Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայից մեծ թվով հայ ուխտավորներ։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ուխտավորներին դիմավորեցին հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Եղիշե աբեղաները։

Կայարանում սրտառուչ ողջագուրումներից հետո ուխտավորները, հրավիրակ աբեղաների առաջնորդությամբ, մեկնեցին Ս. Էջմիածին։ Հուզիչ և անմոռանալի էր այն պահը, երբ ուխտավորները առաջին անգամ ոտք դրին Մայր Աթոռի դարբասից ներս։ Վանքի բակում, Մայր Տաճարում ուխտավորներին սպասում էր մեծ բազմություն։ Տաճարում էր նաև Վեհափառ Հայրապետը։ Ուխտավորները հարգանքով, հուզումով և երկյուղածությամբ մոտեցան Վեհափառ Հայրապետի Ս. Աջը առնելու, ջերմեռանդությամբ կատարեցին իրենց աղոթքն ու սրտառուչ ուխտը և ապա առաջնորդվեցին Վեհարան։ Վեհարանում պաշտոնապես ուխտավորներին ընդունելուց և ողջունելուց հետո, Վեհափառ Հայրապետը նրանց հետ ունեցավ մտերիմ և սրտագին զրույց։ Ուխտավորները հայտնեցին իրենց խորունկ նվիրվածությունն ու երախտագիտությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի հանդեպ։ Նրանք մասնավորաբար իրենց շնորհակալությունները հայտնեցին այն երջանիկ պատեհության համար, որով իրենց հնարավորություն տրվեց այցելել Մայր Հայրենիք, ուխտի դալ Ս. Էջմիածին՝ համբուրելու Մայր Տաճարի նվիրական սրբություններն ու լուսեղեն խորանները, առնելու սիրելի Վեհափառի Ս. Աջը և ստանալու նրա օրհնությունները և Հայրենիքում ողջագուրվելու իրենց հին և նոր հարազատների հետ։

Մեկ ժամ տևող այդ ջերմագին խոսակցության ժամանակ բոլոր ուխտավորների և ներկաների աչքերում խորունկ և սրտաբուխ հուզմունքների, ուրախության, կարոտի և սիրո արտասուքը կար։ Հուզիչ և անմոռանալի էր պահը. հուզվել էին բոլորը և երջանիկ։

Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին և ուխտավորներին մաղթեց այցելության երջանիկ օրեր Հայրենի հողի վրա, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հարազատների բաղձալի շրջապատում։

Ուխտավորները ջերմեռանդությամբ, երկյուղածորեն համբուրեցին Վեհափառ Հայրապետի Ս. Աջը և ապա առաջնորդվեցին Էջմիածնի հյուրանոցը հանգստանալու։

Բարեպաշտ ուխտավորները Հայրենիքում կմնան 20 օր։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, հավատացյալների մի մեծ բազմություն ուխտի էր եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Սուրբ պատարագը մատուցեց Վեհափառ Հայրապետը և քարոզ խոսեց «Լոյծ զկօշիկս յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա երկիր սուրբ է» բնաբանով։ Պատարագի հոգեշունչ արարողություններին ներկա եղավ հալեպահայ ուխտավորների խումբը։ Խմբի բոլոր անդամները Ս. Հաղորդություն ստացան։ Պատարագի ավարտվելուց հետո Վեհափառ Հայրապետը հալեպահայ հյուրերին ընդունեց Վեհարանում։ Բարի գալուստի և հայրապետական ողջույնի Իր խոսքերից հետո Վեհափառ Հայրապետը նրանց հետ ունեցավ մտերմական զրույց ինչպես նրանց առօրյա կյանքի, սփյուռքահայ հասարակական կյանքի, այնպես էլ Մայր Աթոռում ձեռնարկված և վաղուց արդեն ընթացքի մեջ դրված շինարարական, կազմակերպչական, կրթական մի շարք միջոցառումների մասին։ Բարեպաշտ այցելուները հոգեկան բարձր խանդավառությամբ լռեցին Հայոց Հայրապետի եկեղեցաշեն և ազգօգուտ ծրագրերի մասին։

Ընդունելությունից հետո հյուրերը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից Նրա Ս. Աջը համբուրելով և մեկնեցին իրենց ուխտը լիուլի կատարած և Ս. Էջմիածինը տեսնելու իրենց տարիների երազը լավագույն կերպով իրագործված։

Երջանի՜կ վերադարձ մեր թանկագին հյուրերին։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ այցելության եկավ Ֆրանսիայի նախկին Վարչապետ, ռադիկալ սոցիալիստների կուսակցության դեկավար պ. Էդգար Ֆորը։ Մեծահարգ հյուրին ընկերակցում էին Հայաստանի կառավարության պատասխանատու անդամներ, ինչպես և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը։

Հյուրերին ընդունեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Պ. Էդգար Ֆորը իր տիկնոջ և ուղեկիցների հետ եղավ Մայր Տաճարում և Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում։ Նա բարձր գնահատեց հայկական ճարտարապետության այս հրաշալի կոթողը և նրա մանրանկարչական արվեստը։ Ապա հյուրերը առաջնորդվեցին Վեհարան։ Վեհափառ Հայրապետը ողջունեց հյուրերին և բարի գալուստ մաղթեց։ Պ. Էդգար Ֆորը պատասխանեց Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքերին և իր գոհունակությունը հայտնեց ընծայված դեղեցիկ պատեհությունների համար, որոնց առթիվ ինքը այնքան գեղեցիկ տպավորություններ և տպրումներ է ունենում ինչպես ամբողջ Սովետական Միության իր այցելած քաղաքներից, այնպես էլ Հայաս-

տանից և Ս. Էջմիածնից ու Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետից: Նա խոսեց խանդավառությամբ հայ ժողովրդի ստեղծագործ կարողությունների, մեծարժեք մշակույթի և արվեստի մասին, հիշատակեց հայ ժողովրդի պատմության անցյալի տխուր էջերը և շեշտեց հայ ժողովրդի դրացումների ամենատիրականը՝ ապրելու և ստեղծագործելու վառ ցանկությունը և կամքը, վճռականությունը: Պ. Էգգար Ֆորի ստացած տպավորությունները Ս. Էջմիածնից ավելի քան խանդավառ ու գեղեցիկ էին: Հատկապես Մայր Տաճարի ճարտարապետությունն ու մանրանկարչությունը նրա վրա թողել էին խորունկ և անջնջելի տպավորություն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Ֆորից խոսք առնելով, անդրադարձավ հայ և ֆրանսիական ժողովուրդների դարավոր ու պատմական մշակութային և այլ կապերի մասին, ընդգծեց այդ կապերի փոխադարձ օգտակարությունը երկու ժողովուրդների համար: Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունը հայտնեց ֆրանսիական բարեխնամ կառավարությանը, որը պատշաճ հարգանքով ընդունելով Իրեն, ավեց բոլոր դյուրությունները Իր առաքելությունը կատարելու համար: Ապա Վեհափառ Հայրապետն ու պ. Էգգար Ֆորը ունեցան մտերիմ, ջերմ զրույց:

Հյուրերը հյուրասիրվեցին Հայաստանի կոնյակով, քաղցրեղեններով և մրգերով:

Պ. Էգգար Ֆորը իր տպավորությունները արձանագրեց պատվո հյուրերի ոսկյա մատյանում:

Հյուրերը մեկնեցին խոր գոհունակությամբ և լավագույն հիշատակներով Ս. Էջմիածնից և անձամբ Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետից:

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ՄԵԿՆԵՑԻՆ ամերիկահայ ուխտավորները: Օդանավակայանը լեցուն էր ճանապարհողների հոծ բազմությամբ: Մանր ու խորն էր և՛ մեկնողների, և՛ ճանապարհողների հուզմունքը: Երջանիկ հանդիպման պահից հետո, այժմ հասել էր մեկնման տրտում պահը: Սրտառուչ էին ողջերթի գրկախառնումները: Ուխտավորները, որոնք մեկնեցին անմոռանալի հիշատակներով և տպավորություններով Ս. Էջմիածնից, Վեհափառ Հայրապետից և իրենց հարազատներից, մի ցանկություն միայն ունեին՝ նորից գալ ու ընդմիշտ մնալ Հայրենի Հողի վրա Ս. Էջմիածնի հովանու տակ:

Մեկնումի վերջին սրտառուչ րոպեներն էին: Ինքնաթիռը բարձրացավ դեպի երկինք և ամերիկահայ ուխտավորների առաջին խումբը վերադարձավ իր հեռավոր տունը:

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ, կիրակի օրը, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Մայր Տաճարում: Ներկա էր հավատացյալների հոծ բազմություն: Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Սրբազան հայրը իր քարոզի մեջ խոսեց օրվա խորհրդի պատմական ու հոգևոր նշանակության մասին և շեշտեց Ս. Խաչի ուժն ու նրա զորությունը քրիստոնեական հավատի զորացման համար:

Պատարագին ներկա էր բուլղարահայ ուխտավորների մեծ խումբը: Ուխտավորները ջերմեռանդությամբ և երկյուղածորեն աղոթում էին և ունկնդրում սուրբ պատարագի հոգեզմայլ երգեցողությունը:

Սուրբ պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Բարեպաշտ ուխտավորները սուրբ պատարագի ավարտվելուց հետո եղան Թանգարանում և ապա առաջնորդվեցին Վեհարան, որտեղ նրանց ընդունեց Վեհափառ Հայրապետը, և բարի գալուստ մաղթեց նրանց ի դեմս բուլղարահայերի: Ուխտավորներից շատերի հետ Վեհափառ Հայրապետը անձնական ծանոթություն էլ ուներ: Ջերմ ու սրտագին զրույցի ժամանակ հյուրերը արտահայտեցին իրենց սերն ու նվիրվածությունը դեպի Ս. Էջմիածինն ու դեպի Վեհափառ Հայրապետը: Նորին Ս. Օծությունը խորապես հուզված սրտառուչ այս վերաբերմունքից, Իր գոհունակությունը հայտնեց և հրճվանքով խոսեց բուլղարահայ գաղութի ազգային և եկեղեցական կյանքի կազմակերպվածության, եկեղեցասիրության, հայրենասիրության մասին ու բարեմաղթություններ արեց հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության համար:

Ուխտավորները մեծապես հետաքրքրվեցին Մայր Աթոռի, միաբանության, Ճեմարանի ուսանողության առօրյա կյանքով և խանդավառվեցին Վեհափառ Հայրապետի ծրագրերով: Վերջում նրանք ստացան Վեհափառ Հայրապետի օրհնությունները և համբուրելով Նորին Ս. Օծության Ս. Աջը, գոհունակությամբ և մխիթարված վերադարձան Երևան:

Երեկոյան վանքի բակում տեղի ունեցավ Ս. Խաչի հանդիսավոր «Անդաստան»-ի թափորը Մայր Տաճարի շուրջը, ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ: Եկեղեցական արարողություններին նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ 20-Ը Մայր Աթոռում հյուր եղավ ամերիկահայ նկարիչ պ. Ամատունին: Պ. Ամատունին ներկայացավ Վեհա-

փառ Հայրապետին, ծանոթացավ Մայր Աթոռի կյանքին, եղավ Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե և Ս. Շողակաթ վանքերում և յուղաներկով նկարեց մեր մի շարք վանքերը։ Նա շատ գոհ մնաց իր այցելությունից և մեկնելիս ափսոսանք հայտնեց, որ ավելի ժամանակով վանքում մնալու հնարավորություն չուներ։

☼☼☼

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, Մայր Աթոռ այցելության եկավ Մայր Հայրենիքի, Սովետական Միության և արտասահմանյան մի շարք երկրների դիտնականների խումբը, որը Հայաստան էր ժամանել մասնակցելու համար Բյուրականի աստղադիտարանի հանդիսավոր բացմանն ու աստղաբաշխության վերաբերյալ կայանալիք խորհրդակցություններին։ Հյուրերը ներկա եղան պատարագի արարողությանը, ապա այցելեցին Մայր Աթոռի թանգարանը, որտեղ նրանց ընկերացավ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և մանրամասնորեն ծանոթացրեց Մայր Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին։

Հյուրերը լավագույն տպավորությամբ և գոհունակությամբ վերադարձան մայրաքաղաք։

☼☼☼

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ այցելեցին Երևանի պետական օպերայի մի խումբ արվեստագետներ։ Մայր Տաճարում լինելուց հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել նրանց Վեհարանում և զրուցել նրանց հետ, հետաքրքրվեց նրանց արվեստի վերաբերյալ ստեղծագործական աշխատանքների հաջողություններով և հետագա ծրագրերով։ Արվեստագետները հաճույքով լսեցին Վեհափառ Հայրապետի գնահատության և բաջալերության խոսքը և կարծիքը իրենց երաժշտական, կատարողական, բեմահարդարման արվեստի և բեմադրական կարողությանը մասին։

Արվեստագետները գոհունակությամբ և շնորհակալությամբ հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից։

☼☼☼

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելության եկավ Սովետական Միության կանանց հակաֆաշիստական կոմիտեի հրավերով Սովետական Միություն և Մայր Հայրենիք ժամանած զանազան երկրների կանանց պատվիրակությունը։ Հյուրերին ընդունեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Պատվիրակությունը այցելեց Մայր Տաճարը, ծանոթացավ եկեղեցահնագիտական թանգարանին, դիտեց վերանորոգչական և մարմարապատման աշխատանքները և մեկնեց Հոկտեմբերյան՝ այցելելու և ծանոթանալու կոլտնտեսական կյանքին։